խու գերի կը գտնուին ըսելով՝ նշան մ՚ալ տուաւ, որ առանց դրամ մի վճարելու կրնար ուղտ մի և գերի մ՚ առնուլ։ Մարդը ասոնց պէտք չունէր. առածները բերաւ ընկերներուն քով։ Բայց երբ արթնցաւ՝ սպասաւորն եղածներն պատմեց. մարդն ուրախանալով ազատ ըրաւ սպասաւորը. միայն այնքան յանդիմանութիւն մ՚ ըրաւ՝ որ զինքը չէր արթնցուցեր որ անոր ալ առածէն աւելի բան կրնար առնուլ։

Արապէն կոյր էր, և զինքը դտնողը քովը գացած ժամանակը ինքն ալ իր երկու գերիները մէկ մէկ կողմն առնելով և անոնց ձեռքէն բռնելով աղօթքի կ՚երթար. Երբ իրեն գացողին պէտքն իմացաւ, գերիներուն երկուքն ալ անոր տուաւ որ տանի ծախէ և պէտքը հոգայ։ Մարդն առնուլ չուզելով՝ Արապէ ըսաւ որ ես ասոնք քովէս զատելն աչքս առած եմ, ուստի դուն չընդունիս՝ թէեւ ես ազատ կ՚ընեմ, որով իմ ընելիքս ըրած կ՚ըլլամ։ և դուն պարապ տեղը կարօտութեանդ մէջ կը մնաս։ Այս խօսքիս վրայ մարդը հաճեցաւ առնելու։

Երեքն ալ իրենց փորձոյն արդիւնքը հրապարակաւ պատմեցին. և ամէնէն վերագունից դատուեցաւ Արապէին առատաձեռնութիւնը. որ գրեթէ նոյն իսկ իր աչքը ուրիշի նպաստելու համար տուեր է. վասն զի իր ձեռքէն բռնելով ուզած տեղը տանող գերիները քովէն հեռացնելէն ետքը, իրեն հարկ կ՚ըլլար խարխափելով և պատերը բռնելով քալել։

Ասոնց պէս օրինակներ մինչեւ հիմայ ալ մէջերնին պակաս չըլլալուն օրինակներ կան, որկէց կ՚իմացուի որ առատաձեռնութիւնն Արաբներուն բնական մէկ յատկութեան պէս եղած է։

Ասոր համար զարմանք կու գայ՝ երբ նոյն Արաբներուն գողութեան պարապելը կը լսուի. Անոնք իրենք զիրենք արդարացնելու և գողութիւններնին օրինաւորութեան կերպարանք մի տալու համար կ՚ըսեն, թէ երբ Աբրահամ նահապետն իրենց նախահայր Իսմայէլը քովէն ճամբեց, Աստուած ալ Արաբիոյ և շրջակայից դաշտերն ու անապատները բոլոր մէջը գտնուածներովը իրեն շնորհեց, և անկէց ալ անոր ցեղին անցաւ այս իրաւունքը. ուստի այն երկիրները գտնուող ամէն բան, թէ մարդ ըլլայ թէ ինչք՝ իրենցն է. և անոնց տիրելով գողութիւն ըրած չեն ըլլար, իրենց ինչքը առած կ՚ըլլան. այսու ամենայնիւ՝ երբ մէկը անոնց քով իբրեւ հիւր երթայ, անոր բնաւ մէկ բանին չեն դպչիր, և ուրիշներուն ալ կը ծանուցանեն որ այն ինչ ճանապարհորդը իրենց հիւր է. ուստի այն մարդը կրնայ ամենայն ապահովութեամբ և առանց բան մի գողցնելու այն գող կարծուած Արաբներուն մէջ ուզածին չափ պտըտիլ։ Արաբներուն իրարմէ բան գողնալն ամենեւին լսուած չէ։

## ԻՐԱՒՈՒՆՔ ԵՒ ՊԱՐՏՔ ՍՆԳ-ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ

(Շարունակութիւն, տես Թիւ 7։)

Պատիւը ազատութեան կը նմանի. մէյմ՚ որ կորսուի, ալ չես կրնար նորէն ձեռք ձգել։ Ուրեմն ամենայն նախանձայուզութեամբ պէտք է որ պատուոյս վրայ հսկեմ. և անանկ բան մը չգործեմ որ կրնայ կորսուիլ. ուրիշի վրայ չարախօսելէն առաջ պէտք է լաւ մտածեմ. վասն զի որչափ որ դիւրին է վնասելը, այնչափ ալ դըժուարին է եղած վնասուն դարմանն առնելը. ինչ բարի բան որ ուրիշներուն վրայ լսեմ, յօժարութեամբ պէտք է

որ հաստատամ․ թող եթէ չար ըսեմ, պէտք չէ որ մէկէն հաստատամ․ ինչուան որ շատ ապացոյցներ ձեռքս չունենամ․ և ան ատեն ալ պէտք է որ կարենկցեմ, լսեմ և ձեռքիս եկածն ընեմ չարն արգելելու և ուղղելու համար ։

## ԻԱ․

Սեպհականութիւն ընչից ։ Երբ դեռ աշխարհքիս բնակիչքը սակաւաթիւ էին․ ամէնքը իրարու առաջուանց այն չափ տեղ միայն ունէին, որչափ որ իրենց յատուկ օրական ապրուստին կինար բաւել, և ինչ պտուղ որ երկիրը կը բերէր և որսացած կենդանին ։

Բայց երկիրը միշտ պտուղ չը բերեր և ոչ ալ միշտ կարելի է որսորդութեան ելլալ․ ուստի մարդիկ հարկ տեսնելին ապրելու համար աւելի ապահով կերպ մը մտածել, որով այլ և այլ կենդանիներ իրենց ընտանեցուցին, ինչպէս․ եզ, ոչխար, այծ, ձագար, խոզ, հաւ, սագ, բադ, աղաւնի, զորոնք ժողովեցին ու պահպանելով անոնցմէն օրպէս զի կարենան առնել անոնց կաթը, միսը, բուրդն և հաւկիթն․ և ահա այս կերպով սկսաւ հովուական կամ նահապետական կեանքը․ Բայց նեղութիւն քաշելով կենդանեաց ճարակ գտնելու համար աստին անդին թափառելէն, սկսան երկիր մշակել, հերկել, սերմանել, հնձել․ պտուղներ հասցնել և այգիներ տնկել այն ատեն մարդիկ հաստատուն տեղ մը կեցան․ հնձածնուն մէկ մասը ձմեռուան պահել սկսեցան, տուներ կառուցին, ջրոյ հոսանքներուն ընթացքը կարգաւորեցին և ճամբաներ բացին․ և ով որ դաշտ մը հերկէր․ իրաւունք ալ՝ ունէր անոր հունձքին իրեն և իր ընտանեացը պահելու, այսինքն անոր տէր ըլլալ և մեռնելէն ետքն ալ նոյնը իրեն որդւոցը ժառանգութիւն թողուլ ։

## ԻԲ․

Ճարտարութիւն ․ — Պարզ մշակութիւն միայն մարդս սեպհական ընչից տէր չըլլար․ վասն զի ի բաց առեալ քանի մը տեսակ պտուղները․ մէկ ալ մնացած բնութեան թերքերն անգործ են, այսինքն երկայն իշխանութեան կարօտ են որ զանոնք մեր պիտոյից համար կարենանք գործածել․ ինչպէս օրինակի համար ըսենք՝ կանեփը որ դաշտին մէջ կը բուսնի՝ այրելէ զատ ուրիշ բանի չկինար ծառայել․ երբ որ հասուննայ՝ մարդիկ կը քաղեն, և որպէս զի թրմի ու կակղնայ, դաշտին վրայ կը թողուն կամ ջրի մէջ կը ձգեն․ ետքը երբ որ ցօղուններն արեւուն մէջ լաւ մը կը չորնան, կը սկսին ծեծել և սանտրով կեղեւը կ'իյնայ և կը մնան միայն թելերն առանց կեղեւի․ վերջը ասիկայ կ'առնեն կը գզեն որպէս զի չուզերն ու թանձր մասը բաժնուի ու բարակ և փափուկ մասը մնայ․ ետքը կանայք աղեկատին վրայ կ'ոլորեն ու կը մանեն․ մանուելէն վերջը ոստայնանկը կ'առնէ կը հիւսէ կտաւ կը շինէ․ յետոյ ան կտաւէն սաւան եւ ուրիշ որ և իցէ ճերմակեղէններ կը շինեն ։

Այս պատրաստութիւնները, կամ թէ ըսենք աշխատութիւնը քիչ շատ ամեն բերքի հարկաւոր են, որուն Ճարտարութիւն կ'ըսենք․ և ով որ այսպէս կ'ընէ, վարձքն ալ կ'ընդունի․ Մանող կանայք, ոստայնանկն ու դերձակն իրենց աշխատած կանեփին վրայ սեպհականութիւն կը ստանան․ հաւասար ան գեղացիին որ ցաներ ու հնձեր է ։

## ԻԹ.

Ընկեր. — Երբ ճարտարութիւնը դեռ չէր զարգացած. ամենքը աշխատած էին ամեն բան իրենք իրենցմէ ընելու. երկիր հերկել ու մշակել եղեր է. բաց և ծածկած պատրաստել. տուներ շինելու համար փայտ կտրտել ու զգեստ կարել եղեր է. վերջապէս ամեն բան։ Բայց տանելով մարդս չափէ դուրս կ'աշխատէր ու խիստ շատ բանի զբաղելով՝ բան մ'ալ չէր կրնար լաւ ընել. հազիւ թէ ժամանակ կը գտնար իրեն պէտքը լեցնելու. թող թէ արուեստից մէջ կատարելագործուելու, և աւելի քիչ զբօսնութեց ունեցէ ըլլալու։

Սակայն հետզհետէ շատ մարդիկ այլ և այլ արհեստներու հետեւէ եղան. մէկը երկրագործութեան, մէկալը ձեռագործի, միւս մը կերակրեղինաց. ուրիշ մը զգեստուց և ագանելեաց. բնակարանի և իրենք զիրենք պաշտպանելու։ Վասն զի ընկերութիւն մը որչափ աւելի բազմանայ այնչափ աւելի ալ աշխատութիւնները կը բաժնուին որով ամենքը աւելի կը վաստըկեն և աշխատութիւննին կը կատարելագործուի. որովհետեւ միշտ նոյն բանն ընելով մարդս նաեւ լաւ ընելու կը վարժի։

Այս է միջերնիս եղած արհեստից բազմանալուն պատճառը որ հիմա կը տեսնաս. մէկն որ արուեստ մը ունի ձեռքը՝ իրաւամբ վարձք ալ կ'ընդունի. և տարակոյս չկայ որ վաստըկածին վրայ արդարապէս իշխանութիւն ունի։

## Լ.

Վաճառականութիւն. — Իմ դաշտս լաւ ցորեն կը բուսցընէ. քու կողդ ալ խաղող. մէկ մաս մը ցորենս քեզի կու տամ. դուն ալ փոխադարձ գինիէդ մաս մը ինծի կու տաս որով երկուքնիս ալ թէ հաց կ'ունենանք և թէ ըմպելիք։ Լոմպարտիայէն շատ մետաքս կ'ելլայ. Ժենուայէն ալ աղէկ ձէթ. ուստի Լոմպարտացիք մետաքս կու տան ու Ժենուացուցմէ տիկ տիկ ձէթ կ'առնուն։ Ես ոչխարներուս բուրդը կը կտրեմ բայց մաքրելու կերպը չգիտնալով քեզի կը յանձնեմ որ մաքրես. գզես. մանես հիւսես եւ երկու վերարկու շինես. մէկն ինծի մէկալը քեզի։

Այս փոխանակութիւնները վաճառականութեան ամենէն պարզ կերպերն են. դուն ալ նոյնը կ'ընէիր տղայութեանդ միջոց. երբոր խնձորդ ընկերոջդ կու տայիր որպէս զի իրեն խաղալիքը քեզի տայ հիմա խնձորին տեղ ստակ կը գործածես. վասն զի աս փոխանակութիւնները դիւրացնելու համար մարդիկ ստակը հնարեցին որոնք մետաղի կտորուանքներ են որոշեալ ծանրութեամբ. ձեւով նշանով. որոնք իրենց չափովը ամեն աշխատութեանց և որ և իցէ թիւ՛թի արժէքին դեղ կը բռնեն։ Թէ որ ասուեղէնի կարօտութիւն ունիմ. ստակը ձեռքս կ'ելլամ վաճառականին կ'երթամ որպէս զի իրմէ գնեմ. գինը կը վճարեմ և ինքն ալ ինծի կը ծախէ։ Եթէ հարկ է որ մէկը տանս պատրաստական ըլլալու ինծի ծառայէ, վարձք կը խոստանամ իրեն. ուստի ինքը կը ծառայէ ինծի. ես ալ կը վճարեմ իրեն. ասուեղէնը ծախողն և ան ծառայութիւնն ընողը իրենց տուած գնոյն եւ վարձքին վրայ սեփհականութեան իրաւունք մը կը ստանան. թէ որ ես այն ասուէն առնելէս կամ ան ծառայութիւնն ընդունելէս ետքը խոստացածս չտամ. գող կ'ըլլամ. թէ որ վաճառականը վաճառքին որպիսութեանն և արժէքին մէջ զիս խաբելու ըլլայ՝ նմանը գողութիւն.

է, գործեալ գող է անիկայ որ ծառայողին աշխատութեան համեմատ վարձք չտար։

## ԻԸ.

Ընտանեկան օրէնք։ — Ընկերութեան մէջ դեռ ուրիշ պարտաւորութիւններ ալ հարկաւոր են, ինչպէս՝ բժիշկը զմեզ առողջացնելու համար. փաստաբանը մեր իրաւունքները պաշտպանելու համար. վարժապետը դաստիարակելու համար. քահանայն հաւատոյ կարեւոր բաները սովրեցնելու համար. դատաւորը մեկուն իրաւունքը ուրիշներուն չունենալը որոշելու համար. զինուորը մեր ապահովութեան վրայ հսկելու համար. եւ այսպէս դեռ ուրիշ շատ ըզբաղմունքներ(1). ասոնք բոլորն ալ ուրիշներուն օգտին համար չե՞ն մի աշխատիր. ուրեմն իրաւացի է՝ որ վարձք մը՝ ունենան։

## ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Ինչպէս նախորդ թուով ծանուցած էինք Պրուսիոյ Վեհ. Թագաւորին միաբանական ուխտի ըրած վեհանձնական շնորհը, այս անգամ պատիւ կը համարինք հրատարակել նոյնին Արքայական յիշատակաց մասին Ս. Քաղաքիս Վսեմ. Հիւպատոս Մեծ. Պրօֆէսօր Պ. Պետերման հայագիտակ առ Ամեն. Արքայն Հայոց ուղղած նամակը, նուիրելով մեր երախտագիտական զգացմունքը առ Նորին Վեծութիւն Վսեմ. Տօքթօր Պետերման հայասէր անձն, որ իւր ազնիւ սրտին արդիւնքը ՚ի գործ դրած է, այն է Արքային Հօր առ ինքն յայտնած սէրը ու համակրութիւնը ծանուցած է Վեհ. Արքային Պրուսիոյ՝ որու շնորհիւ կը պանծայ ու խօսս այսօր Թագաւորական յիշատակաւ։

Յերուսաղէմ. 8 Օգոստոս ըստ նոր տոմարի. 1868.

Հիւպատոսական Հիւսիսային
Գերմանիոյ դաշնակցութեան
՚ի Յերուսաղէմ։

## ԱՄԵՆԱԳԱՑԻՆ ՑՐԲԱՋԱՆ ՏԷՐ

«Պատիւ ունիմ ծանուցանել Ձեր բարձր Սրբազնութեան՝ թէ ընկալայ ՚ի վսեմափառ Նախարարէ Տէրութեան մերոյ գրութեամբ Օգոստափառ Թագաւորին եւ Թագուհւոյն, պաշտօնական գրութեամբ հանդերձ, յորում յանկարծ պատուիրէ ինձ՝ զի մատուցից զայնս ՚ի կողմանէ Նորին Արքայական Մեծութեանն՝ Թագաւորին Պրուսիոյ եւ Նախագահին Հիւսիսային Գերմանական դաշնակցութեան Գուլիելմոսի Ա. առ ձեր Ամենապատիւ Սրբազնութիւն ՚ի նշան շնորհակալութեան վասն սիրալիր բարեշընորհութեան, զոր ցուցիք եւ ցուցանէք ինձ հանապազ, եւ մանաւանդ վսեմափառ Արքայի Սրբոյն Յակոբեան Baron de Tetten (Բարոն դը Թեթէն) որ ինքնին հաստուցեալ է յանձն Նորին Արքայական Մեծութեան զամենայն բարեհաճ մարդասիրութիւն ձեր զոր յանցելում ամառն փութալով առ ձեզ ՚ի Յերուսաղէմ Ամենայն ակնածու-

(1) Ազնուական աստիճան կամ պարապմունք բառ անուններն ամենք չօգնէն ինչպէս կրթութիւն, իրաւագիտութիւն, Աստուածաբանութիւն եւ հաշուագրութիւն ամենք ալ չօգնէն, ինչպէս բժշկութիւն, վիրաբուժութիւն. դեղագործութիւն։ Ոմանք ալ կը սորվէն ինչպէս Արհեստաւորութիւն եւ Զինուորութիւն։ Իսկ ասոնց ամենուն գերագոյն գլուխն է կրօնքը իւր պաշտօնեաներովը, կրօնք հեղինակը։ Բայց որպէս Տ. Հ. Թ. Ս. ալ կը դնէ թէ վարժապետներն են։ Տես ծաղիկ հանդիսին 108 երեսը եւ ես ալ կ՚ըսեմ թէ իրաւունք ունի՝ գերագոյնք վարժապետներն են ծ. Օրինակով։

(Պիտի շարունակուի։)